ЮБИЛЕИ

ՏԻԳՐԱՆ ՄԵՐԳԵՅԻ ՄՆԱՑԱԿԱՆՈՎ

(ծննդյան 100ամյակի առթիվ)

Լրացավ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Տիգրան Մերգեի Մնացականովի ծննդյան 100ամյակը: Անվանի բժիշկ գիտնականը, վաստակաշատ մանկավարժն ու հասարակական ակտիվ գործիչը զգալի ծառայություններ ունի հետպատերազմյան ժամանակաշրջանում Հայաստանում թերապիայի զարգացման, բժշկական կադրերի պատրաստման և հանրապետության թերապևտների գիտական ընկերության ղեկավարման բնագավառներում:

Նա ծնվել է 1899 թ. Բաքվում, որտեղ ստացել է միջնակարգ և բարձրագույն կրթություն: Համալսարանի բժշկական ֆակուլտետը ավարտելուց հետո 1925 թ. մեկնել է Սամարղանդ, որտեղ զբաղեցրել է երկրամասային հիվանդանոցի օրդինատորի պաշտոնը: 1930 թ. նա նշանակվում է բժշկական ինստիտուտի ներքին հիվանդությունների ամբիոնի ասիստենտ, որով սկսվում է ապագա գիտամանկավարժական գործունեությունը, որը տևում է 38 տարի: 1936 թ. մինչև 1940 ղեկավարել է ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի, իսկ 1940 թ. մինչև 1949 թ. ֆակուլտետային թերապիայի ամբիոնը, միաժամանակ շուրջ 10 տարի հանդիսանալով ինստիտուտի գիտառեսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն:

1940 թ. ամփոփելով իր բազմամյա ուսումնասիրությունների արդյունքները, «Ուզբեկական ԽՍՀ-ի տաք կլիմայի պայմաններում կրտսոզ թոքաբորբի ախտածնությունը, կլինիկան և բուժումը» թեմայով պաշտպանում է դոկտորական դիսերտացիա, ինչ 1949 թ. հրավիրվելով Երևան, նշանակվում է բժշկական ինստիտուտի ֆակուլտետային թերապիայի ամբիոնի վարիչ: 1954թ. գիտնականն ընտրվում է հանրապետության թերապևտների գիտական ընկերության վարչության նախագահ և մինչև իր կյանքի վերջը ղեկավարում ընկերության աշխատանքները: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է հանրապետության էնդոկրինոլոգների գիտական ընկերությունը, որի առաջին նախագահ է ընտրվել անվանի թերապևտը:

Պրոֆ. Կ.Մնացականովի անմիջական ղեկավարությամբ 1959 թ. հրավիրվեց Հայաստանի թերապևտների առաջին հանրապետական կոնֆերանսը, որին

մասնակցեցին շուրջ 600 պատվիրակներ և հյուրեր Խորհրդային Միության տարբեր քաղաքներից: Անվանի գիտնականը 2 անգամ ընտրվել է հանրապետության խորհրդի պատգամավոր, պատգամավորության պարտականությունները կատարելու հետ միաժամանակ ղեկավարելով առողջապահության հանձնաժողովը, մշտապես հանդես բերելով սկզբունքայնություն, պարտաճանաչություն և ստանձնած գործի հանդեպ ուշադրություն: Օգտվելով պատգամավորի իր իրավունքներից նա ամեն կերպ ձգտում էր արդարացնել իր ընտրողների վստահությունը, ընթացք տալ նրանց դիմումներին և բողոքներին:

Գիտամանկավարժական գործունեության ընթացքում պրոֆեսոր Մնացականովը պատրաստել է բազմաթիվ բարձրորակ թերապևտներ, այդ թվում 4 դոկտոր, 23 գիտության թեկնածու: Գիտնականը զբաղվել է երկրամասային ախտաբանությունների, մասնավորապես մալարիայի, ախտածնության և բուժման հարցերով, գիտականորեն հիմնավորել «Ջերմուկ» առողջարանում սիրտ-անոթային համակարգի հիվանդների բուժման հակացուցումները և մշակել բուժավայրում բալնեոլոգիական բուժիչ միջոցառումների համար ցուցմունքներ: Զբաղվելով հոդային սուր ռևմատիզմի բուժման խնդիրներով առաջարկել է բուժման նոր եղանակ, որը գոյություն ունեցող եղանակներով բուժման անարդյունավետության դեպքում հաճախ տալիս էր ցանկալի արդյունք: Ուսումնասիրելով Բրայտի հիվանդության կլինիկան և ախտածնությունը նա առաջարկել է հիվանդության դասակարգման սխեմաներում արտացոլել նաև կլինիկայում հաճախ համակցված և անցողիկ ձևերը:

Բժշկական ու մանկավարժական գործունեության հետ միաժամանակ կատարելով գիտահետազոտական աշխատանքներ, նա թողել է գիտական հարուստ ժառանգություն: Հատուկ ուշադրության են արժանի Գ. Գևորգյանի հետ համատեղ գրված «Էնդոկրին գեղձերի հիվանդությունները», «Անհետաձգելի թերապիա» և «Անհետաձգելի թերապևտիկ հիվանդություններ» մենագրությունները: Անվանի գիտնականի ծառայությունները բարձր են գնահատվել կառավարության կողմից և նա պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

Վաստակաշատ բժիշկ գիտնականը, հմուտ մանկավարժն ու հասարակական ակտիվ գործիչը իր բեղմնավոր կյանքի ուղին ավարտեց 1968 թ. երկարատև հիվանդությունից հետո, գործընկերների, աշակերտների և նրան ճանաչողների հիշողության մեջ մնալով որպես համեստ, բարի և ազնիվ քաղաքացի, վառ անհատականությամբ օժտված անձնավորություն, հոգատար բժիշկ, գիտնական ու մանկավարժ:

Վ. Մ. Մարտիրոսյան